3 *եղեցիս, իսկ հայրն Սարգի-*
4 *ս եւ միաբանք ուխտիս հաստ-*
5 *ատեցին զատկի պատարագն*
6 *յիշատակել ինձ եւ ամուսի-*
7 *նն իմ Մարիամ, անխափան։ Թվ. ՌՃԾ։*

Ծանոթություն.— *Մանուչարը թե որ եկեղեցին է նորոգել և ինչ չափով, հայտնի չէ։ Հավանաբար նա Սարգիս արքեպիսկոպոս Արղությանցի նորոգություններին է մասնակցել և իր գրամով է նորոգել եկեղեցիներից մեկը, իսկ թե ինչու է եկեղեցու նորոգության արձանագրությունը գրատան պատին քանդակել, չգիտենք։ Երևի Մանուչարը պահանջել է մի երևացող տեղում փորագրել արձանագրությունը և միաբանների հետ համաձայնության է եկել գրատան պատին դնել։*

## 109. Գրատան պատի տակ բարձր պատվանդանի վրա կանգնեցրած խաչքարի ճակատին

***Հ ՉԺԱ Մ 1662***

Հրատարակվում է առաջին անգամ

1 *Սբ նշան Քի բարեխաւս յաւուր մե-*
2 *ծի, Գորգա վաճառակ-*
3 *անի։ Թվին ՉԺԱ*

Ծանոթություն.— *Առաջին տողը գրված է խաչքարի ճակատին, իսկ մյուս երկուսը ճակատի ներհակ մասի վրա, չորս փոքրիկ խաչերի արանքի ազատ տողերում։*
*Գորգա վաճառականի պետք է կարդալ ոչ թե գորգի վաճառական, այլ Գ(է)որգա վաճառականի։*

## 110. Գրատան ներսում, խոյակի խաչքարի ճակատին

***ԺԶ դար***

Հրատարակվում է առաջին անգամ

*Ի տր Ղուկաս(է)*

# X ԳՐԱՏԱՆ ՆԱԽԱԳԱՎԻԹ

## 111. Գրատան նախագավթի աջ ծայրին, պատի մեջ հագցրած խաչքարի ճակատին

***Հ ՈԺ Մ 1161***

Հրատարակված է՝ Հար 298, Լալ 389, Վիմ 31

1 *Ի ՈԺ թուոս. ի թագաւորութեանս վրաց Գիորգեա կանգնեց-*
2 *աւ սբ ամենափրկիչս ի բարեխաւսութիւն հաւատացելոց։*